ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/2079-25 առ 22 08 2025թ.

«Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ
տնօրեն
Գ. Ասլանյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-179/24-01/431 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ տիկին Ասլանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռադիոդետալների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-179/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-179/24-01/431 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները և այն հանգամանքը, որ Պայմանագրի հավելված 1-ի 12-րդ չափաբաժնով սահմանված դիոդը մինչ օրս չի մատակարարվել՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և

«Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃՊՁԲ-179/24-01/431 պայմանագիրը 12-րդ չափաբաժնի մասով և առաջարկվում է ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (10 200 ՀՀ դրամ) և որակավորման (15 300 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91